



**Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի 2013թ.
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/փետրվար-նոյեմբեր/**

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին,

Եղեգնաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրինու) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել են մի շարք միջոցառումներ: Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Միջոցառում Քանակ

Անվանումը	քանակը	տոկոս
Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ	4	-
Հանրային լսումներ	6	-
Գործնական աշխատանքներ և արձագանքներ	2	-
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	9	-
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	8	-
Շնորհանդես	2	-
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	3	-
Փորձագիտական խորհրդի նիստեր	1	-
Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	382	-
ՀԿ ներկայացուցիչները	28	%
պատանիներն ու երիտասարդներ	45	%
ԶԼՄ ներկայացուցիչներ	7	%
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	10	%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	10	%

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 256 մարդ:

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հունվար	7	Հուլիս	44
Փետրվար	14	Օգոստոս	30
Մարտ	24	Սեպտեմբեր	23
Ապրիլ	42	Հոկտեմբեր	22
Մայիս	30	Նոյեմբեր	29
Հունիս	42		

ՋԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/

«Էկոլուր» ՀԿ	2 այցելություններ Օրհուս կենտրոն, համատեղ մասնակցություն 2 հասարակական լուսմների
--------------	----------------------------------------------------------------------------------

Փորձագետների խորհրդի նիստ /քանի անգամ, ինչ է քննարկվել, տարեկան պլաններ/

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է Փորձագետների խորհրդի 1 նիստ, որի ժամանակ ներկայացվել է ԵՕԿ 2013 թվականի աշխատանքային ծրագիրը, որից հետո խորհրդի անդամները առաջարկություններ են կատարել աշխատանքային ծրագրում միջոցառումների ավելացման վերաբերյալ: Քննարկվել է նաև փորձագետների խորհրդի անդամների հետ աշխատել անհատական մոտեցմամբ՝ ելնելով միջոցառման տեսակից, բայց միևնույն ժամանակ միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն տարածել խորհրդի բոլոր անդամներին:

2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,

2.1 ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

2.1.1 Կատարված գործողություններ,

Վայոց ձոր մարզի Հերմոն, Եղեգիս, Զատիթափ, Զեդեա, Մարտիրոս, Գետափ, Վայք և Եղեգնաձոր համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ Օրինուի կոնվենցիայի ու շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային փաստաթղթերի լուսաբանման նպատակով: Հանդիպումներին մասնակցել են համայնքապետարանների աշխատակիցներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ ու քաղաքացիներ, որոնց ընդհանուր թիվը կազմել է 93 մարդ:

Վերոնշյալ համայնքները գտնվում են բնապահպանական ռիսկեր պարունակող տարածքներում, քանի որ այնտեղ կամ արդեն շահագործվում են ՀԷԿ-ներ, կամ նոր պետք է շահագործվեն ՀԷԿ-ներ ու բազմամետաղային հանքեր:

2.1.2 Ձեռք բերված արդյունքներ:

Քաղաքացիների մոտ բարձրացել է իրազեկվածության մակարդակը շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող միջազգային փաստաթղթերի ու իրենց իրավունքների, շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող որոշումների ընդունման գործում ՏԻՄ-երի պատրաստությունների վերաբերյալ:

Քաղաքացիների մոտ բարձրացել է ակտիվության մակարդակը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործողությունների դեմ պայքարելու գործում:

«Նանե» ՓՀԷԿ-ի նախագծային փաստաթղթերում փոփոխություններ մտցնելու և հասարական լսումների չանցկացման վերաբերյալ քաղաքացիների կողմից կազմվել է արձանագրություն և ներկայացվել ԲՆ-ին:

«Եղեգ» ՀԷԿ-ի նախագծային փաստաթղթերի և հասարակական լսումների ոչ պատշաճ կազմակերպման համար համայնքի բնակիչները դիմել են տարբեր կառույցների՝ Վայոց ձորի մարզպետարան, Վայոց ձորի մարզային ոստիկանություն:

2.2 ՆՊԱՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

2.2.1 կատարված գործողություններ

Եղեգնաձոր համայնքի 2013 թվականի բյուջեի կազմմանն ընդառաջ կազմակերպվել են հանդիպում քննարկումներ ՀԿ-ների ներկայացուցիչների, քաղաքացիների ու ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ: Պատրաստվել է առաջարկությունների ցանկ և ներկայացվել է Եղեգնաձորի Ավագանու խորհրդին բյուջեում ներառելու համար:

Աղնջաձոր համայնքի բյուջեի ռեսուրսների բացահայտման համար կազմակերպվել է բյուջեի քննարկում ՏԻՄ աշխատողների ու բանկիչների հետ:

2.2.2 Ձեռք բերված արդյունքներ:

Եղեգնաձորի համայնքապետարանին ներկայացված առաջարկությունների մի մասը հաստատվել է Ավագանու խորհրդի կողմից և ներառվել է համայնքի բյուջեում:

Աղնջաձոր համայնքի բյուջեի վերլուծության արդյունքում բյուջեն դարձել է ավելի թափանցիկ բնակիչների համար, ինչպես ֆինանսական ռեսուրսների ու Հայաստանում ԳԴՀ դեսպանատան կողմից տրամադրված դրամաշնորհի արդյունքում համայնքում ստեղծվել է նախակրթարան:

2.3 ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լուսմներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

2.3.1 կատարված գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորում տեղի են ունեցել 6 հասարակական լուսմներ, որոնցից 5 վերաբերել է ՀԷԿ-ների շահագործմանը, 1-ը՝ Գլաձորի ոսկու հանքի շահագործմանը: Բոլոր հասարակական լուսմների անցկացման ամսաթվի, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկատվություն է տարածվել էլեկտրոնային տարբերակով: Հասարակական լուսմներից հետո պատրաստվել է տեղեկատվական նյութ լուսմների անցկացման, քննարկված հարցերի ու կայացված որոշումների վերաբերյալ, որն էլ ևս տարածվել է էլեկտրոնային տարբերակով:

2.3.2 Ձեռք բերված արդյունքներ:

Մինչ հասարակական լուսմների անցկացումը դրա վերաբերյալ տեղեկատվության տարածումը նպաստել է բնակիչների մոտ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, որն էլ իր հերթին բերել է մասնակիցների թվի ավելացմանը հակարակական լուսմներին:

Հասարակական լուսմների անցկացման ամսաթվի, վայրի ու ժամի վերաբերյալ հետևողականության արդյունքում 2 անգամ արձանագրվել է, որ լուսմներն անցկացվում են այլ հասցեներում, մինչդեռ ՀՀ ԲՆ կայքում նշված են եղել այլ հասցեներ: Այդ առիթով տեղում ճշտվել են, թե որտեղ են իրականացվում լուսմները և տեղեկատվություն է տրամադրվել շահագրգիռ կողմերին լուսմների անցկացման վայրի վերաբերյալ:

2.4 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարաթորյակներ և այլն):

2.4.1 կատարված գործողություններ

Ընթացիկ տարում Եղեգնաձորի Օրինու կենտրոնի անմիջական նախաձեռնությամբ Վայոց ձորում ստեղծվել է հասարակական կազմակերպությունների, տարբեր միջազգային ծրագրերի

շրջանակներում բացված կենտրոնների միջև համագործակցության ցանց, որի նպատակն է նպաստել հասարակության ու ՏԻՄ համագործակցության ձևավորմանը, համայնքային խնդիրների լուծման համար համատեղ միջոցառումների կազմակերպմանը:

Շարունակվել է Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համագործակցությունը Ասիական Զարգացման Բանկի հայաստանյան գրասենյակի հետ, որի արդյունքում ՏԻՄ-երի հետ համատեղ առաջարկվել է ուսումնասիրել Վայոց ձորում կոշտ թափոնների կառավարման հնարավորությունները:

2.4.2 Ձեռք բերված արդյունքներ:

Հասարակական կազմակերպությունների ցանցի միջոցով կազմակերպվել են 2 բնապահպանական արշավներ, որոնց ժամանակ արշավականները ձեռ են բերել շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ գիտելիքներ:

Վայքի Քաղաքացիական կենտրոնի հետ համագործակցության միջոցով նշվել է Քաղաքացիական հասարակության օրը, որի ժամանակ կազմակերպվել է երթ քաղաքի կենտրոնական փողոցում, ինչպես նաև համայնքի բնակիչների կողմից վեր են հանվել համայնքային խնդիրներն իրենց աչքերով: Վերջիններս դասակարգվել և ներկայացվել է համայնքնապետարանին:

«Սյունիք-Զարգացում» հասարակական կազմակերպության համայնքային զարգացման ծրագրերի ղեկավարի, ՕԲՄՖԱՄ-Հայաստան գրասենյակի կողմից իրականացվող «Աղետների ռիսկերի նվազեցում» ծրագրի համայնքային պատասխանատուի ու Վայոց ձորի մարզպետարանի հետ համատեղ մշակվել է շրջակա միջավայրի պահպանությանը, վայրի կենդանիների համար կերի ապահովմանը, սողանքների կանխարգելմանը նպատակ ունեցող նախագիծ, որոնց շուրջ կողմերը աշխատանքներ են տանում:

2.5 ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

2.5.1 Կատարված գործողություններ

Կարևորելով հասարակության մոտ շրջակա միջավայրի պահպանման ու կարևորության վերաբերյալ գիտելիքների ու տեղեկատվության մակարդակի բարձրացումը՝ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի ու համագործակից այլ կառույցների հետ կազմակերպվել են քաղաքացիների մոտ շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորմանը նպատակ ունեցող տարբեր միջոցառումներ:

Արդեն երկրորդ տարին է, ինչ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը հանդիսանում է Սահմանից սահման ծրագրի համակարգողը Վայոց ձորի մարզում: Ծրագրի շրջանակներում Վայք, Մալիշկա ու Եղեգնաձոր համայնքներում կազմակերպվել են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ինտերակտիվ դասընթացներ 251 պատանիների ու երիտասարդների համար:

Զերմուկ քաղաքում անցկացվող Էկոճամբար ու Խաչիկ համայնքում իրականացվող Էկոլար ծրագրերի շրջանակներում աշխատանքային մեկ օր նվիրվել է Օրհուսի կոնվենցիայի

վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանն իտրեկատիվ միջոցով, որին մասնակցել են 92 պատանիներ Վայոց ձորի 7 համայնքներից:

2.5.2 Ձեռք բերված արդյունքներ:

Իրականացված միջոցառումների արդյունքում մասնակիցների մոտ բարձրացել է տեղեկատվության ու գիտելիքների մակարդակը շրջակա միջավայրի պահպանության, դրանց համար մշակված միջազգային փաստաթղթերի վերաբերյալ: Նրանց վարքագծում զարգացել է պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի կարևորության ու պահպանման վերաբերյալ: Բարձրացել է պատանիների ու երիտասարդների՝ բնապահպանական տարբեր միջոցառումներին մասնակցելու հետաքրքրվածությունը:

Էկոճամբարի ավարտից հետո երիտասարդներն իրենց համայնքներում ստեղծել են բնապահպանական կենտրոններ, իսկ Օրհուս կենտրոնը հանդիսանում է կենտրոնների համագործակից կառույց: Համայնքային կենտրոնների միջոցով փորձ է արվում համայնքներում կազմակերպել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

2.6 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

2.6.1 Կատարված գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի գործունեությունն ընթացել է բնականոն հունով՝ շարունակելով մնալ բաց հարթակ հասարակության բոլոր կողմերի համար: Հունվար ամսին կազմվել է կենտրոնի 2013 թվականի աշխատանքային ծրագիրը, որի մեջ ներառված գործողությունների հիմման վրա կազմակերպվել է կենտրոնի գործունեությունը:

Կենտրոնի կողմից կազմակերպված բոլոր միջոցառումների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող մարզային միջոցառումների վերաբերյալ տարածվել է տեղեկատվություն, ներկայացվել են հաշվետվություններ:

Կենտրոնը շարունակել է համագործակցությունը տարբեր կառույցների հետ՝ զարգացնելով նյութատեխնիկական ու մարդկային ռեսուրսների բազան:

2.6.2 Ձեռք բերված արդյունքներ:

Համաձայն կենտրոնի 2013 թվականի աշխատանքային ծրագրի, Օրհուս կենտրոնն ապահովել է ծրագրային կետերի ամբողջական կամ մասնակի մասով միջոցառումների կազմակերպումը: Օգոստոս ամսից 2 տարի ժամկետով Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը հյուրընկալել է ԱՄՆ ԽԿ կամավորի: Սեպտեմբեր ամսից Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը դարձել է Երիտասարդական

բանկ ծրագրի Եղեգնաձորի Երիտասարդական բանկ կոմիտեի գործընկեր կառույցը Վայոց ձորում: Համագործակցությունների արդյուքնում հազեցել է կենտրոնի նյութատեխնիկական բազան, գարադարանը համալրվել է նոր գրականությամբ, մեծացել է կամավորների թիվը:

Հասարակության ու ՏԻՄ-ի մոտ բարձրացել է տեղեկացվածության մակարդակն Օրհուս կենտրոնի գործունեության վերաբերյալ: Վայոց ձորում Օրհուս կենտրոնը շարունակել է կապող օղակ հանդիսանալ մարզում գործող, մարզից դուրս գործող, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների համար:

3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

- ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
- ԱՄՆ Խաղաղության Կորպուս
- Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ
- Ասիական Զարգացման Բանկ
- Մայքրոսոֆտ Ինովացիոն Կենտրոն
- Հայաստանում ԳԴՀ դեսպանատուն
- Վայոց ձորի մարզպետարան
- Համայնքապետարաններ /ՏԻՄ-եր/
- Նախարարություններ
- ՀԿ-ներ
- ԶԼՄ-ներ
- Գործարարներ
- Դպրոցներ
- Համալսարաններ
- Քաղաքացիներ

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ

Կարող ենք փաստել, որ ներկայիս սերունդն ավելի սրտացավ վերաբերմունք է տածում շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ, նրանց էկոլոգիական կրթության մակարդակը,

համեմատած նախորդ տարվա հետ, այսօր ավելի բարձր է: Հասարակության ակտիվ մասը տեղեկացված է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերին ու օրենսդրական դաշտին:

Այնուամենայնիվ, սոցիալական խնդիրներից ելնելով՝ նույն հասարակությունը շատ հաճախ ընտրում է լռելու տարբերակը, ցուցաբերում է հասարակական անտարբերություն, երբեմն մտնում է գործարքի մեջ:

Ստացվում է այնպես, որ հասարակության ավելի մեծ զանգվածն է այսօր տեղեկացված թե՛ օրենսդրական դաշտին, թե՛ իր իրավունքներին և թե՛ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործընթացների իրականացման մեխանիզմներին, բայց օրենքի անհավասարության ու սոցիալական խնդրի առկայության պայմաններում, հավանական ճնշումների ենթարկվելու վտագից խուսափելով, այդ գիտելիքները շարունակում է մնալ որպես տեղեկատվություն, այլ ոչ թե բարեփոխման գործիք:

Ուստի, գիտելիքների ու տեղեկատվության տրամադրման խնդրից բացի, այսօր առկա է համայնքների անվտանգության խնդիրը. քաղաքացին ակտիվ քաղաքացի կդառնա, երբ ունենա տնտեսական ու սոցիալական անվտանգություն:

5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

Աշխատանքային տարում ի հայտ եկած դժվարությունները կապված են հասարակության անտարբերության հետ, որն ունի իր հիմավոր պատճառները: Բայց միևնույն ժամանակ գրանցվել են դեպքեր, երբ քաղաքացիները՝ տիրապետելով իրենց իրավունքներին, պայքարել են անվտանգ միջավայրում ապրելու իրենց իրավունքի համար, սակայն պատասխանատու ավելի բարձր օղակներում այդ հարցերը քննարկման առարկա չեն դարձել՝ ՀՀ Բնապահպանության նախարարություն:

Համագործակցելով տարբեր կազմակերպությունների ու ծրագրերի հետ, Օրհուս կենտրոնն իր աշխատանքները ծավալել է համայնքների անվտանգության շրջանակների շուրջ՝ քաղաքացիներին առաջարկելով ոչ միայն օրենքի իմացությունը, այլ նաև այլընտրանքային գործիքներ, որոնք կարող են օգնել տնտեսապես անկախ լինել համայնքում մեծ դերակատարում ունեցողներից:

Նման գործիքներից են eagro ծրագրի իրականացումը, աշխատաշուկայում ավելի մրցունակ դառնալու համար նրանց հմտությունների ու կարողությունների զարգացմանը նպաստող դասընթացների մասին տեղեկատվության տրամադրումը:

6. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Ամփոփելով ընթացիկ տարում իրականացված գործողություններն ու ստացված արդյունքները՝ Օրհուս կենտրոնի գործունեությունը շարունակում է նպաստել քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու համայնքների անվտանգությանը: Այսօր էլ ավելի է կարևորվում Օրհուս կենտրոնների գործունեությունը համայնքներում, քանի որ այն իր գործունեության տեսակով եզակիներից է, որը աշխատանքային գործունեությունը ծավալում է հասարակության ու կառավարման մարմինների հետ՝ համատեղ աշխատանքներ տանելով և լուծումներ առաջարկելով շրջակա միջավայրի պահմանմանն ուղղված խնդիրներին:

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:
/խնդրում ենք տեսնել Statistics փաստաթուղթ/

8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):
/խնդրում ենք նայել նկարները/

Եղեգնաձորի բնապահապանական տեղեկատվության
հասարակական Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նարեկ Բեգլարյան

3601, Եղեգնաձոր

Շահումյան 5

Հեռ: +374 55403018

Էլ.փոստ info_yeghegnadzor@aarhus.am,

narekbeg@yahoo.com